«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 57/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 07.02.2020թ. ժամը 17:18

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 08.01.2020թ-ին ստացված, քաղաքացի Սամվել Գևորգյանի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով՝քաղաքացի Սամվել Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ՝ Մայիս Հայրապետյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ **ս/թ-ի Փետրվարի 07-ին, 17.00-ին** ՝ ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում,հրավիրվել էր «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը:

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Դիմումատու՝ քաղաքացի Սամվել Գևորգյանի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանը
Քաղաքացի Սամվել Գևորգյանի,սնանկության գործով կառավարիչ՝Մայիս Հայրապետյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

Դիմումատու՝ քաղաքացի Սամվել Գևորգյանի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանը
Քաղաքացի Սամվել Գևորգյանի,սնանկության գործով կառավարիչ՝Մայիս Հայրապետյանը

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1.«ՍԳԿԿ»ԻԿԿ-ում 08.01.2020թ-ին ստացված,քաղաքացի Սամվել Գևորգյանի ներկայացուցիչ՝ Անի Համբարձումյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ քաղաքացի Սամվել Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ՝ Մայիս Հայրապետյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ստեգելով ներկաների լիազորությունները և անձը հաստատող փաստաթղթերը ու «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.6 հոդվածի կարգով դիմում-բողոքը ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց դիմումատու քաղաքացի Սամվել Գևորգյանի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանին,ով հակիրճ ներկայացնելով դիմում բողոքը

մասնավորապես նշեց,որ սույն գործով ձեռք բերված ապացույցի հիմքով,հավաստվում է սնանկության գործով կառավարիչ Մայիս Հարապետյանի կանխակալ և խտրական վերաբերմունքը պարտապանի նկատմամբ և վերջինիս ոչ բարեխիղճ վարքագիծը ու հնարավոր անօրինական գործողությունների կատարումը սնանկության վարույթում և հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելու համար իրենց կարծիքով կառավարիչը չի կարող և չպետք է իրականացնի կառավարչի իր լիազորությունները և խնդրում է վաղաժամկետ դադարեցնել կառավարչի լիազորությունները և նշանակել այլ սնանկության գործով կառավարիչ:

Դիմումատուն ներկայացրեց նաև դիմումին կից իր ապացույցները մասնավորապես ձայնային կրիչը:

Հանձնաժողովի նախագահի կողմից կազմակերպվեց ձայնային կրիչի պարունակության լսման գործընթացը,որից հետո հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը, որ իրեն անհասկանալի է,թե ինչ կապ ունի սնանկության գործով կառավարիչը այս ձայնային կրիչում առկա զրույցի հետ,քանի որ զրուցակիցներից որևէ մեկը սնանկության գործով կառավարիչը չէ,իսկ ինչ են խոսում կառավարչի մասին,դա չի կարող մեղսագրվել կառավարչին ինչ ինչ գործողությունների կատարման համար:Բացի դրանի իրեն դեռ անհայտ է թե ինչ կարգով /օրինական թե անօրինական/ է իրականացվել ձայնագրությունը և այն կարող է ծառայել պատշաճ ապացույց թե ոչ:

Կանոնակարգի համաձայն իր դիրքորոշումը և բացատրություններ ներկայացնելու համար ձայնի իրավունք տրվեց՝ քաղաքացի Սամվել Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ՝ Մայիս Հայրապետյանին, ով ներկայացրեց հանձնաժողովին գրավոր առարկություններ և 08.01.2020թ-ի ՀՀ Սնանկության դատարանի ԱՐԴ/0091/04/17 որոշումը և խնդրեց հաշվի առնելով նույնաբովանդակ միջնորդության վերաբերյալ դատարանի դիրքորոշումը,մերժել դիմում- բողոքի հիմով կարգապահական վարույթի հարուցումը:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը հայտնեց այն կարծիքը,որ այո որոշմամբ դատարանը անդրադարձել է նույնաբովանդակ միջնորդությանը և մասնավորապես ձայնագրություն-ապացույցին և գտել է որ այլ անձանց մասնավոր զրույցները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ և չեն ապացուցում կառավարչի կողմից իր լիազորությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը:Նշված հիմերով դատարանը որոշել է միջնորդությունը մերժել:

Հանձնաժողովի անդամի կարծիքով դիմում բողոքում նույնպես չկան հիմքեր կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման համար և առաջարկեց մերժել կարգապահական վարույթի հարուցումը,դրա հարուցման հիմքերի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ համաձայն «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.12 հոդվածի.

-Կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմք հայտնաբերվելուց հետո՝վեցամսյա ժամկետում,բայց ոչ ուշ,քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո:Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթը չի կարող հարուցվել,իսկ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Քանի որ դիմում-բողոքում ներկայացված փաստական հանգամանքները վերաբերվում են հիմնականում երկու մասնավոր անձանց զրույցին և նրանց մասնավոր կարծիքներին ու գնահատականներին,իսկ կառավարչին վերաբերվող մասը հիմնականում դիմումատուի կողմից կատարված եզրակացություններ և իր անձնական գնահատականներն ու մտավախություններ են:Հանձնաժողովի նախագահն նույնպես առաջարկեց մերժել Կարգապահական վարույթի հարուցումը, դիմում բողոքում կառավարչի վարքագծի կամ որևէ իրականացրած գործողության փաստի բացակայության հիմքով :

Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկին և քվերկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1.«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 08.01.2020թ-ին ստացված,քաղաքացի Սամվել Գևորգյանի ներկայացուցիչ՝ Անի Համբարձումյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Սամվել Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ՝ Մայիս Հայրապետյանի գործողությունները /անգործություն/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ կարգապահական վարույթի հարուցումը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.12. հոդվածի հիմքով մերժել,կարգապահական վարույթի հարուցման հիմքերի՝փաստական հանգամանքների բացակայության հիմքով:
Ներկայացված դիմումը,առարկությունները և կից փաստաթղթերը կցել գործին:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյան